ՑԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
№ 1 ԳԻՏԱ-ՊՈՊՈՒԼՅԱՐ ՍԵՐԻԱ № 1

ԱԿԱԴԵՄ. ՀԱԿՈԲ ՄԱՆԱՆԴՅԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՐԱԲԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ

ՊԵՏՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՑԵՐԵՎԱՆ 1939

ՅԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

№ 1 ԳԻՏԱ.-ՊՈՊՈՒԼՅԱՐ ՍԵՐԻԱ № 1

ԱԿԱԴԵՄ. ՀԱԿՈԲ ՄԱՆԱՆԴՅԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՐԱԲԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Դասախոսություն՝ կարդացված Պետհամալսարանի լեկտորիումում
1939 թ. մարտի 18-ին, «Սասունցի Դավթի»
հուշարձանի կապակցությամբ

ՀԱՅԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՊՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ՊԵՏՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1939

Պատ. խմբագիր՝ Ա. Հովհաննիսյան
Տեխ. խմբագիր՝ Զ. Մարուխյան
Սրբագրիչ՝ Մ. Հախնազարյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Վ. Յեսայան

Դյավլիսի լիտոդր Ն—2855. Պատվ. № 491, տիրաժ 2000։

Պետհամալսարանի Հրատարակչ. տպարան, Յերևան, Տերյան 72։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՐԱԲԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Յեվրոպական պատմագիտության մեջ այն կարծիքն է սովորաբար տիրում, վոր իբր թե արևելյան ժողովուրդները հլու և հնազանդ են լինում միշտ ճնշող բռնակալների հանդեպ։ Հռչակավոր գերմանական պատմագետ Թ. Մոմզենը, որինակ, իր Հռոմեական պատմության մեջ մատնանշում է, վոր ասիացիներն անսահման հակում ունեն անգործության և ընդունակ չեն ինքնաբերաբար վոտքի յելնելու շահագործող իշխանությունների դեմ [1]։

Այդ կարծիքը, ինչպես կտեսնենք, բացարձակապես սխալ է։ Նորագույն ուսումնասիրությունները, գլխավորապես ռուս արևելագետների՝ ակադեմ. Բարտոլդի, պրոֆ. Յակուբովսկու և ուրիշների, ինչպես և իմ այսորվա դասախոսությունը, պարզ ապացույց են, վոր ժողովրդական շարժումները և ապստամբությունները տեղի յեն ունեցել պարբերաբար վոչ միայն միջնադարյան Ռուսաստանում և Արևմտյան Յեվրոպայում, այլև Հայաստանում ու Մերձավոր Արևելքում։ Հատկապես արաբական տիրապետության շրջանում գյուղացիների, արհեստավորների ու անգամ ստրուկների ըմբոստացումներն ու ապստամբությունները, ինչպես ցույց են տվել վերոհիշյալ ռուս գիտնականները, 9—10 դարերում դառել եյին գրեթե անընդհատ։

Յերբ խոսք է լինում այդ շարժումների մասին՝ պետք է նախ և առաջ ի նկատի ունենալ, վոր մատնանշված ապստամբություններն ունեցել են կամ սոցիալական ու դասակարգային բնույթ և կամ յեղել են ժողովրդական-ազատագրական շարժումներ ընդդեմ ճնշող ու կեղեքող ոտար տիրապետողների։

Սոցիալական-դասակարգային բնույթի շարժումները Մերձավոր Արևելքում, ինչպես այժմ պարզված է, գտնվել են, մեծ

---

[1] Моммзен, „Римская История", т. II, Москва 1887, էջ 269։

մասամբ, Մազդակյանների ուսմունքի ազդեցության տակ։ Սասանյան Պարսկաստանի Կավատ թագավորի ժամանակ (488-531թ.)-այս ուսմունքը, ինչպես հայտնի է, անարգել կերպով տարածվել եր Պարսկաստանում և ունեցել եր ժողովրդական ստորին խավերի մեջ հսկայական հաջողություն։ Իր կրոնական մասում այս աղանդը պարզապես խառնուրդ եր Զրադաշտական դուալիզմի և պարսկա-քրիստոնեական Մանիքեական աղանդի։ Իսկ սոցիալական իր մասում նա քարոզում եր ֆեոդալական դասային արտոնությունների վերացում, ընդհանուր հավասարություն և գույքերի ու հարստությունների, ինչպես և կանանց, հավասար բաշխում բոլոր մարդկանց մեջ։ Մազդակի ու նրա հետևորդների ասելով, անհավասարությունը չար ու դիվային մի յերևույթ ե, իսկ հավասարության հաստատումն արդար մի պահանջ ե և համապատասխանում ե բարի աստծու կամքին։

Կրոնական-սոցիալական այս աղանդի վրա յես հարկավոր համարեցի առանձնապես կանգ առնել, վորովհետև Մազդակյանները, յենթարկվելով հետագայում, վերոհիշյալ Կավատի թագավորության վերջին տարիներում, սոսկալի հալածանքների՝ փախել եյին մասամբ նաև Ատրպատական ու իրենց ուսմունքը տարածել եյին Անդրկովկասում և, ըստ յերևույթին, նաև Հայաստանում։ Հայտնի է արդեն, վոր իններորդ դարի առաջին կիսում Ատրպատականում տարածված պարսիկ Բաբեկի և նրա հետևորդների «Խուրրամյան» անվանվող աղանդի մեջ ևս կային գույքային հավասարության պահանջներ, վոր պետք ե վերագրել, անշուշտ, Մազդակյանների ազդեցության։ Միանգամայն հնարավոր ե նույնպես, վոր հայ Պավլիկյան ու Թոնդրակյան աղանդների վրա ևս կարող եյին վորոշ ազդեցություն գործած լինել պարսկական այդ աղանդավորները։ Սակայն այս խնդիրը կարոտ ե դեռ ուշադիր ու լուրջ քննության և փաստական հիմնավորման ու ապացուցման մատենագրական համոզիչ վկայություններ ի ոգնությամբ։

Տարբեր բնույթի շարժումներ եյին, ինչպես վերև ասացի, ժողովրդական-ազատագրական շարժումներն ընդդեմ ոտար տիրապետության։ Յեվ հենց այս կարգի՝ 8—9-րդ դարերի յերկու հայկական մեծ ապստամբություններն ընդդեմ արաբական տիրապետության գլխավոր նյութն են կազմելու իմ այսորվա դասախոսության։ Իսկ հատկապես կրոնական-սոցիալական բնույթ ունեցող դասակարգային շարժումների մասին Հայաստանում յես խո-

ունելու յեմ հաջորդ իմ դասախոսության ընթացքում, որի թեման ե լինելու «Քաղաքները Հայաստանում 10-11-րդ դարերում»։

* * *

Արաբական տիրապետությունը հաստատվել եր Հայաստանում, ինչպես գիտեք, յոթերորդ դարի հիսունական թվականների սկզբներին։ Նոր նվաճողների տիրապետության առաջին շրջանում, սկսած մոտ 650 թվից մինչև 750 թիվը, ուրեմն՝ գրեթե ճիշտ հարյուր տարի՝ Հայաստանը գտնվում եր Ոմեյան խալիֆների իշխանության տակ, իսկ 750 թվից սկսած մինչև 887 թիվը, այսինքն՝ մինչև Բագրատունյաց թագավորության հաստատումը՝ նա յենթարկվում եր Աբբասյան տոհմի խալիֆներին։ Արաբական տիրապետության առաջին շրջանում խալիֆայության կենտրոնը գտնվում եր Դամասկոսում և գերիշխող դեր եյին կատարում նոր աշխարհակալ պետության մեջ Ասորիքի արաբները, իսկ յերկրորդ շրջանում կենտրոնը դառել եր 762 թվին հիմնված Բաղդադ քաղաքը և գերակշիռ դեր եյին խաղում Իրաքի արաբները և մահմեդականություն ընդունած պարսիկ ազնվականությունը։

Արաբական նվաճումների և աշխարհակալ ծավալման մասին առանձնապես հետաքրքիր ե արաբական մատենագիր Յակուբիի վկայությունը նրա «Գիրք խալաջի մասին» յերկում, որի մեջ նա Ոմար խալիֆին վերագրում ե հետևյալ ուշագրավ խոսքերը.

> «Մահմեդականներն ուտում են նրանց [նվաճվածներին], քանի իրենք կենդանի յեն, իսկ յերբ մենք ու նրանք մեռնենք՝ մեր վորդիները կուտեն նրանց [նվաճվածների] վորդիներին՝ իրենց կենդանության ժամանակ»։

Այս «ուտողներն» ու շահագործողները, իհարկե, առավելապես Ոմեյան և Աբբասյան խալիֆներն եյին և իշխող դասերը, մինչդեռ արաբական ու մահմեդական ժողովրդի ստորին խավերը իրենք ևս գտնվում եյին տնտեսական ծանր դրության մեջ։

Ոմեյանների ժամանակ արաբների տիրապետությունը Հայաստանում, ինչպես և բնակչության,—իհարկե գլխավորապես ստորին խավերի,— տնտեսական ու հարկային շահագործումն ստար այս աշխարհակալության կողմից յեղել ե, մանավանդ

սկզբնական շրջանում, համեմատաբար մեղմ ու տանելի։ Նրանց մեղմ ու զգուշավոր այդ քաղաքականությունը բացատրվում է պարզապես նրանով, որ Ոմեյաններն ի նկատի չեն ունեցել Հայաստանի ստրատեգիական ու ռազմական մեծ նշանակությունը և ուզեցել են, պահպանելով նրա ներքին ինքնուրույնությունը և նախարարական նախկին կարգերը՝ ոգտագործել նրա զինվորական ուժերն իրենց նոր սահմանների պաշտպանության համար, ընդդեմ Բյուզանդիայի ու խազարների։ Ոմեյանների այս քաղաքականությանը կամովին ընդառաջել եյին և իրենք հայկական նախարարությունները։ Տեսնելով, որ Բյուզանդական կայսրության զորքերը դրեթե անընդհատ պարտություն են կրում, և հույս չունենալով ոգնություն ստանալու հույներից՝ նրանք հպատակել եյին խալիֆայությանը, կնքելով նրա հետ հատուկ պայմանագիր։

Այդ դաշինքը, վորով տրվել եր նախարարություններին ներքին ինքնուրույնություն՝ կնքված եր 653 թվին Մուավիայի հետ։ Թե ինչպիսի մեծ արտոնություններ եյին նրանք ստացել՝ այդ յերևում է դաշինքի բովանդակությունից։

«Այս թող լինի,—պայման է կապում Մուավիան,—հաշտության ուխտն իմ և ձեր մեջ՝ վորքան ժամանակ դուք կամենաք։ Ցերեք տարի յես ձեզանից հարկ չեմ առնելու. իսկ հետո կտաք, ձեր յերդման համաձայն, վորքան դուք կկամենաք։ Ձեր յերկրի մեջ պետք է ունենաք 15.000 հեծելազոր և նրանց պետք է պարենավորեք ինքներդ. արժեքը յես դուրս կգամ հարկից։ Հեծելազորը յես Ասորիք չեմ տանի, սակայն ուրիշ տեղ, ուր վոր հրամայեմ՝ պետք է պատրաստ լինին գնալու։ Ձեր բերդերը վոչ ամիրաներ կուղարկեմ, վոչ արաբ սպա և վոչ նույնիսկ մեկ հատ հեծվոր։ Թշնամի չպիտի մտնի Հայաստան. իսկ յեթե հույները ձեզ վրա հարձակվեն՝ կուղարկեմ ձեզ ոգնական զորք, վորքան վոր ուզենաք։ Յերդվում եմ մեծ աստծու անունով, վոր սուտ չեմ խոսում» (Սեբեոս, գլ. ԼԷ)։

[«Այս լիցի ուխտ հաշտութեան իմոյ ընդ իս և ընդ ձեզ որչափ ամաց և դուք կամիջիք. և ոչ առնում ի ձէնջ սակ ղերբեամ մի. ապա յայնժամ տաջիք երդմամբ, որչափ և դուք կամիջիք. և հեծեալ կալէք յաշխարհիդ Ժե հազար։ Եւ հաց յաշխարհէն տուք, և ես ի սակն արքունի անդարեմ, և զհեծեալսն յԱսորիս ոչ խնդրեմ. բայց այլուր և հրամա-

յեմ, պատրաստ լիցին ի գործ. և ոչ արձակեմ ի բերդորայն ամիրայս, և ոչ տաճիկ սպայ՝ ի բաղմաց մինչև ցմի հեծեալ։ Թշնամի մի մտցէ ի Հայս. և եթէ գայ Հոռոմ ի վերայ ձեր՝ արձակեմ ձեզ զղաւրս յաւգնականութիւն որչափ և դուք կամիջիք։ Եւ երդնում ի մեծն Աստուած՝ եթէ ոչ ստեմ»][1]։

Այս դաշնագրությամբ, ինչպես տեսնում ենք, հայկական նախարարություններին տրվել էին ինքնավար իրավունքներ ու բացառիկ արտոնություններ։ Սակայն չնայած դրան՝ արաբական տիրապետությունը, անգամ այս սկզբնական շրջանում, Հայաստանի համար յեղավ աղետալի ու կործանարեր։ Նա պարբերաբար կրկնվող պատերազմների ընթացքում շարունակ հարձակվան ու ավերածությունների յենթարկվեց։ Յեթե նա հավատարիմ եր մնում խալիֆայությանը՝ նրան անխնա պատժում էին հուլյները։ Իսկ յեթե անցնում եր Բյուզանդիայի կողմը՝ վրեժ էին առնում արաբները։

Հայաստանի ամայացումը և տնտեսական քայքայումը Ոմեյանների տիրապետության շրջանում պարզ ու վորոշ մատնանշված է ասորական մատենագիր Դիոնիսիոս Տելմահրեցու ժամանակագրության մեջ։ Նկարագրելով արաբական Մասլամա հրամանատարի ռազմերթը (716/7 թ.) դեպի Բյուզանդիա և նրա գալը Արածանի գետի հովիտներն ու ներքին Հայաստան՝ Տելմահրեցին վկայում է, վոր՝

«Այս ամբողջ յերկիրն աչքի յեր ընկնում և ուներ առաջ բազմաթիվ բնակչություն, խաղողի շատ այգիներ, հացացանքեր և ամեն տեսակ սքանչելի ծառեր։ Սակայն այնուհետև նա ավերվել եր և նրա շրջանները չունեցին այլևս բնակչություն»[2]։

* * *

Յեթե խալիֆների տիրապետության առաջին շրջանում Հայաստանն ավերվում եր բյուզանդա-արաբական կռիվների պատճառով, վորոնք հաճախ տեղի էին ունենում Հայաստանի տերի-

---

[1] «Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն», Ս. Պետերբուրգ 1879, էջ 138։

[2] Տես „Chronique de Denys de Tell-Mahré", publ. et trad. par Chabot, Paris 1895, էջ 12։

տորիայի վրա, նրանց տիրապետության յերկրորդ շրջանում, գլխավորապես ութերորդ դարում, նա արյունաքամ եր լինում վոչ այնքան այդ կոիվների, վորքան ծանր և տաժանելի հարկերի պատճառով։

Ոմեյանների իշխանության ժամանակ, մանավանդ սկզբնական ժամանակաշրջանում, Հայաստանի արքունի հարկերը համեմատաբար ծանր չեյին։ Այդ յերևում է վոչ միայն վերոհիշյալ դաշինքի պայմաններից, այլև 12-րդ դարի հայ մատենագիր Սամուել Անեցու ուշագրավ մի վկայությունից։ Սրա ասելով, յերբ արաբական իշխանությունը հաստատվեց Հայաստանում, խալիֆայությունը՝

«վերցնում եր յուրաքանչյուր տնից չորս դրամ, յերեք մոտ խորբալ [այսինքն՝ մաղած ցորեն], մեկ ձիատոպրակ, մեկ մազե պարան և մեկ ձեռնոց. իսկ քահանաներից, ազատներից և հեծելազորից հրաման տրվեց հարկ չառնել»։

[«յամենայն տանէ առեալ Դ դրամ և Գ մոթ խորբալ, և ձիատոպրակ մի, և պարան մի մազէ, և ձեռնարար մի. իսկ ի քահանայից և յազատաց, և ի հեծելոց՝ ոչ հրամայեաց առնուլ զհարկն»][1]։

Մեջ բերված այս վկայության մեջ ի նկատի յե առնված 7-րդ դարում Հայաստանում գործածվող մոդը կամ գրիվը, վորի կշռորդը, ինչպես ցույց եմ տվել իմ «Կշիռները և չափերը» աշխատության մեջ (եջ 75—79), հավասար եր 9 կիլ. 792 գր., իսկ դրամը նույն այդ դարում Մերձավոր Արևելքում տարածված Սասանյան արծաթ դրամն է, վորը համապատասխան է ըստ դրամական իր արժեքի մոտավորապես այժմյան 50 վոսկի կոպեկի[2]։ Ուրեմն, ըստ մեր այս հաշվի՝ 3 մոդ մաղած ցորենը, վոր խալիֆայությունն առնում եր յուրաքանչյուր տնից՝ համապատասխան կլինի 29 կիլ. 376 գր. կամ մոտ 2 փթի, իսկ վերոհիշյալ 4 դրամը հավասար կլինի մոտ 2 վոսկի ռուբլու։ Այս գումարի իրական արժեքը յոթերորդ դարում բավական բարձր եր։ Այդ ժամանակաշրջանում մեկ փութ ցորենն արժեր մոտավորապես 25-50 վոսկի կոպեկ։

---

[1] Տես «Սամուել քահանայի Անեցւոյ, Հավաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ 1893, եջ 82։

[2] Տես Հ. Մանանդյան, «Նյութեր Հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության», II, Յերևան 1928, եջ 29, ծան. 6։

Ավելորդ չի լինի նույնպես մատնանշել, որ վերոհիշյալ վկայության մեջ «ազատ»-ներից հետո հիշատակված հեծելազորը, հավանորեն, ռամիկներից կազմված «այրուձին» և, որ գոյություն ուներ արդեն մարզպանության շրջանում։ Ուշագրավ է, որ այս հեծելազորը, որն ազատ էր հարկերից, ինչպես և «ազատ»-ներն ու քահանաները, ստանում էր Ոմեյաններից հատուկ ռոճիկ՝ տարեկան հարյուր հազար դահեկան[1] (=մոտ 550. 000 վոսկի ռուբլի)։ Միանգամայն պարզ է, ուրեմն, որ Ոմեյանների ժամանակ վոչ միայն ծանր չեն յեղել Հայաստանից ստացվող հարկերը, այլև զգալի մասը հարկերի տրվել է վորպես ռոճիկ հայկական հեծելազորին։

* * *

Արաբական հարկային քաղաքականությունը հիմնական փոփոխման յենթարկվեց Հայաստանում Ոմեյանների իշխանության վերջին շրջանում Հեշամ խալիֆի ժամանակ (724—743 թ.)։ Իր թագավորության առաջին կամ յերկրորդ տարում այս խալիֆը կարգադրել էր իր Հերթ զորավարին աշխարհագիր անել Հայաստանում և ավելացնել նրա հարկերը։ Այդ մասին կարևոր տեղեկություններ են հաղորդում Ղևոնդ պատմագիրը և Մովսես Կաղանկատվացին, որ կարևոր եմ համարում մեջ բերել ամբողջությամբ։

1. «Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց», գլ. ԺԷ, եջ 100 (հրատ. 1887 թ)՝

«Յետ սա [Հեշամը] իր իշխանության առաջին տարում հղացավ մի վատ խորհուրդ՝ ուղարկեց մի վոմն զորավար, վորի անունը Հերթ էր, աշխարհագիր անել Հայոց աշխարհում և ծանրացնել նրա հարկատվության ծառայության լուծը տեսակ տեսակ չարիքներով։... Յետ բաղում վտանգ հասցրեց մեր աշխարհին մինչ այն աստիճան, որ բոլորը հառաչում էին ծանր նեղության պատճառով և վոչ վոք չէր կարող ազատվել անհնարին վտանգից»։

[«Եւ սա յառաջնում ամի իշխանութեանն իւրոյ խոր-

---

[1] Համեմ. «Հաւաքումն պատմութեան Վարդան Վարդապետի», Վենետիկ 1862, եջ 74 (գլ. ԼԹ)։ Վերոհիշյալ 100,000-ի գումարը վոմանք հայ բանասերներից յենթադրել են դրամ կամ դիրհեմ։ Այդ կարծիքը պարզապես սխալ է։

հուրդ վատ ի մէջ առեալ՝ առաքէր զոմն զօրավար, որում անուն էր Հերթ՝ աշխարհագիր առնել ընդ աշխարհս Հայոց վասն ծանրացուցանելոյ զանուր լծոյ ծառայութեան հարկատրութեան ազգի ազգի չարեօք... Եւ բազում վտանգ հասուցանէր աշխարհիս, մինչ զի ամենեցուն հառաչել ի վերայ անհանգիստ նեղութեանցն, յորմէ ոչ զոյր ապրել ումեք յանհնարին վտանգիցն»։

2. «Մովսէսի Կաղանկատուացւոյ, Պատմութիւն Աղուանից աշխարհի», III, ԺԷ, Մոսկվա 1860, եջ 258՝

«Իսկ հարյուր յոթանասուն և չորս թվին Հայոց (մեր թվ. 725 թ.) ամառը անասունների կոտորածը յեղավ և ձմեռը՝ Հերթի աշխարհագիրը, վորն անթիվ պարտավորությունների հարկի տակ առավ մարդկանց, անասուններին և հողերի տարածությունները»։

[«Իսկ ի հարիւր եօթանասուն և չորս թուականութեանն Հայոց (ամ տեառն 725), յամառն մահ անասնոց եղև, և ի ձմերան՝ աշխարհագիրն Հերթի, որ էարկ զմարդ և զանասուն և զսահմանս երկրի ընդ հարկաւ անթիւ ծառայութեան»։

Մեջ բերված այս վկայություններից տեսնում ենք, վոր 725 թվին հաշվառման եյին յենթարկվել Հայաստանում մարդիկ, անասունները և հողերը։ Այս աշխարհագրից հետո վերանում եյին պարզապես ֆեոդալական Հայաստանի հարկային նախկին արտոնությունները։ Հարկերը դանձվելու եյին այնուհետև վոչ թե առաջվա նման տներից կամ յերդերից, այլ մարդկանց ու անասունների թվի համեմատ և ըստ հողերի տարածության ու, հավանորեն, նաև վորակի։ Նախկին յերդահարկի բնույթը հիմնովին այժմ փոխվում եր և սկիզբ եր դրվում գլխահարկի, անասնահարկի և հողահարկի նոր սիստեմի, վորը շուտով կատարյալ աղետ դառավ ամբողջ յերկրի և, մանավանդ, հարկատու ռամիկ ժողովրդի համար։

Արաբական հարկային այս ծանր լուծն եր, վոր 8-րդ դարում վոտքի հանեց հարստահարված յերկիրը և հիմնական պատճառը յեղավ ժողովրդական կատաղի ապստամբությունների ընդդեմ խալիֆայության։

* * *

Ութերորդ դարի կեսերին արաբական խալիֆայության մեջ տեղի ունեցավ քաղաքական մեծ հեղաշրջում։ 748 թվին սկսվեցին նրա մեջ ներքին խռովություններ և 750 թվին, համառ ու արյունահեղ յերկարատև կռիվներից հետո, սպանվեց Ոմեյան տոհմի վերջին խալիֆը, Մրվանը, և իշխանությունն անցավ Աբբասյանների և Իրաքի արաբների ձեռքը։

Այս խռովությունների ժամանակ հայկական նախարարությունները ուզեցին թոթափել արաբական լուծը և ապստամբեցին Գրիգոր Մամիկոնյանի առաջնորդությամբ, հույս ունենալով ոգնություն ստանալու Բյուզանդիայից։ Սակայն ապստամբությունը գլուխ չեկավ։ Աշոտ Բագրատունին, Հայաստանի իշխանն ու պատրիկը, վորին ստիպել եյին մասնակից լինել ապըստամբության, ինչպես և նախարարների մի մասը, բաժանվեցին շուտով Գրիգոր Մամիկոնյանից ու նրա կողմնակիցներից և հպատակվեցին հոժարակամ արաբներին։

Աբբասյանների իշխանության հաստատումից հետո դրությունը Հայաստանում դառավ անտանելի։ Աբբասյան հարստության հիմնադիրը՝ Աբուլաբաս ալ-Սաֆֆահը (750-754 թ.թ.) Հայաստան ուղարկեց վորպես կառավարիչ իր յեղբորը՝ Աբու-Ջաֆար ալ-Մանսուրին։ Սրա կառավարման ժամանակ Հայաստանի հարկատու ժողովրդի մեծագույն մասը մատնվեց հետին ծայր չքավորության։ Վոչ միայն չափազանց ավելացրին հարկերը, այլ պահանջում եյին այժմ նաև նախկին յերեք տարվա հարկերը, վորոնք խալիֆայությանը չեյին վճարված նախարարական ապստամբության ամբողջ տևողության ընթացքում։

Ղևոնդ պատմագիրը վկայում է, վոր ալ-Մանսուրը պահանջում եր հարկ մինչևիսկ մեռելներից, ուստի և հրամայել եր քահանաներին ներկայացնել վախճանվածների ու նրանց ընտանիքների ցուցակները։ Այս վկայությունը, վոր լավ չե հասկացվել, իմ կարծիքով, պարզ է ու հասկանալի։ Ալ-Մանսուրը կարգադրել եր ըստ իս գանձել ժառանգներից մեռածների գլխահարկը, վորը ապստամբության պատճառով խալիֆայությունը չեր ստացել նրանց կենդանության ժամանակ։ Փախչել մի այլ շրջան և ազատվել հարկերից անկարելի յեր, վորովհետև Աբբասյանները հնարել եյին ստուգման ու վերահսկողության հատուկ մի միջոց։ Դորպեսզի կարողանան հայտնաբերել հարկ չվճարողներին՝ ալ-

Մանսուրը հրամայել էր խարանել բոլորի վզերը, վորոնք վճարել էին գլխահարկը՝ կապարե կնիքներով։ Ութերորդ դարի ասորական ժամանակագիր Դիոնիսիոս Տելմահրեցու վկայությամբ՝ Միջագետքում կառավարչական հատուկ պաշտոնյաները խարանում էին յերբեմն, ստրուկների նման, հարկահատույցների վոչ միայն վզերը, այլ նաև յերկու ձեռքերը, կուրծքերը և կոնակները[1]։

Հարկային ծանր այդ լուծը, ինչպես և հարկահանների հալածանքներն ու բռնությունները, ցայտուն կերպով նկարագրված են Ղևոնդի պատմության հետևյալ վկայության մեջ։

«Յեվ տիրեց նրա [Մրվանի] տեղ Աբդլան, վորն ուղարկեց յեղբորը, մյուս Աբդլային, իր տերության բոլոր յերկրները։ Սա, գալով նախ հայոց աշխարհը՝ բաղում վշտով ու նեղությամբ վտանգեց ամենքին և հասցրեց չքավորության ու տնանկության. մինչևիսկ պահանջեց հարկեր նաև մեռելներից։ Նմանապես և վորբերի ու այրիների ամբողջ բազմությունը նա չարաչար տառապեցրեց։ Տանջեց նույնպես աստվածային խորանի քահանաներին ու պաշտոնյաներին, յենթարկելով նրանց խոշտանգանքների, ծեծի ու խայտառակ ճիպոտահարության և պահանջելով, վոր նրանք հայտնեն վախճանվածների ու նրանց ընտանիքների անունները։ Խոշտանգում էր նաև յերկրի բնակիչներին ամենաբռնի ու դաժան հարկապահանջությամբ և, առնելով ամեն մի գլխից բաղում դրամ արծաթի՝ դնում էր բոլորի պարանոցներին կապարե կնիք»։

[«Եւ տիրէ ընդ նորա Աբդլայ, և առաքէ զեղբայր իւր զմիւս Աբդլա շրջել ընդ ամենայն աշխարհս իշխանութեանն իւրոյ։ Որ նախ ելեալ յաշխարհս Հայոց՝ բազում վշտօք և նեղութեամբ վտանգէր զամենեսին և հասուցանէր ի չքաւորութիւն տնանկութեան, մինչև պահանջել հարկս և ի մեռելոցն։ Եւ զամենայն բազմութիւն որբոց և այրեաց չարալուկ տառապեցուցանէր. վտանգէր զքահանայս և զպաշտօնեայս աստուածային խորանին խոշտանգանօք և քքօք այպանութեան և գանիւք՝ ի յայտ ածել զանուանս վախճանելոցն և զընտանիս նոցուն։ Խոշտանգէր և զբնակիչս աշխարհիս բռնագոյն և դառն հարկապահանջութեամբ, առ-

---

[1] Տես «Chronique de Denys de Tell-Mahré», Paris 1895, էջ 104։

նուլ ըստ գլխոյ բազում զուզէս արծաթոյ, և դնել կնիք կապարեայ յամենեցուն պարանոցս»][1]։

Միայն Հայաստանը չեր, վոր հարկապահանջության տաժանելի որեր ապրեց այս ժամանակաշրջանում։ Ալ-Մանսուրը, ինչպես հաղորդում է Ղևոնդը, Հայաստանից անցավ խալիֆայության մյուս յերկրները և, ծանրացնելով ամենուրեք հարկային լուծը, այնտեղ ևս նույն դաժանությամբ հավաքեց հարկերը։ Նրա անսահման արծաթասիրության և ագահության պատճառով եր, վոր անգամ յուր ազգը նրան անվանում եր «հայր» կամ «Արդուլ զանդի», այսինքն՝ ծառա ու մեծարող միմիայն դրամի։

Ալ-Մանսուրի Հայաստանից հեռանալուց հետո, նրան հաջորդող Յեզիտ, Բաղար ու Հասան կառավարիչների ժամանակ՝ հարկային լուծը Հայաստանում վոչ միայն չթեթևացավ, այլ ավելի ևս ծանրացավ։ Աբբասյանները կարիք ունեյին դրամական մեծ միջոցների պալատական իրենց շռայլ ու շվայտ ապրուստի համար։ Մեծ դումարներ եյին հարկավոր նաև նոր հիմնված Բաղդադ քաղաքի շինության համար։ Հասկանալի յե, ուրեմն, վոր այս պայմաններում, ծանրանալու յեր որավուր ինչպես Հայաստանի, նույնպես և խալիֆայության մյուս յերկրների, գլխավորապես, աշխատավոր բնակչության դրությունը։ Աբբասյանները վստահություն չունեյին անգամ իրենց արաբական ու պարսկական հպատակների վրա։ Սրանք պետության զանազան մասերում շարունակ վոտքի եյին յելնում ու ապստամբում։ Խալիֆների իշխանության գլխավոր հենարանը վոչ թե իրենց սեփական ժողովուրդն եր, այլ Խորասանից բերված վարձկան թուրք զորքերը, վորոնց նույնպես անհրաժեշտ եր տալ մունդ և ռոճիկ։

* *

Ալ-Մանսուրի անմիջական հաջորդ՝ Յեզիտ վոստիկանի իշխանության ժամանակ դրությունը Հայաստանում դառել եր ծայրահեղորեն աղետալի։ Դառն ու բռնի հարկապահանջության պատճառով յերկիրը բոլորովին ուժասպառ եր յեղել ու արյունաքամ։ Ինչպես վկայում է Ղևոնդը (գլ. ԼԲ), Հայաստանում նվազել եր և գրեթե վերացել դրամն ու արծաթը։

Հնչյուն փողի այս հատնումը, ինչպես մատնացույց է արված «Հայաստանի առևտուրը և քաղաքները» ռուսերեն իմ աշ-

[1] Տես «Պատմութիւն Ղևոնդեայ», Ս. Պետերբուրգ, 1887, գլ. ԻԸ, եջ 127։

խատուության մեջ[1], չպետք է վերագրել միայն չափազանց հարկատվության, այլ, գլխավորապես, պետք է բացատրել նաև նրանով, որ արաբական տիրապետության ժամանակ Հայաստանի տնտեսական կյանքը զգալի չափով հետադիմել էր և զարգանում էր բնական տնտեսության հետադարձ հիմքերի վրա:

Դրամի և թանգարժեք մետաղների պակասան ու հատնումի հետևանքով անսահման բարձրանալու յեր, իհարկե, նրանց արժեքը: Նույն այս ժամանակ, ինչպես վկայում է իր ժամանակագրության մեջ Միքայել Ասորին[2], Միջագետքում՝

«Զափրի [այսինքն՝ ալ-Մանսուրի] չարաչար ագահության պատճառով այն աստիճան պակասեց արծաթը, որ յեղն ու եշը ծախում եյին մեկ դրամի և տղաները տալիս եյին պահանջողներին 5 դրամի»[3]:

[«Իսկ չարաչար ագահութենէն Զափրի այնչափ պակասեաց արծաթն, զի զեղն և զէշ դրամի միոյ վաճառէին, և զտղայն հինգ դրամի տային պահանջողացն»]:

Շատերը, ասում է նա (եջ 352), փորում եյին գերեզմանները և փնտռում վոսկի ու արծաթ, որպեսզի վճարեն իրենց հարկերը:

Նման դրություն, ինչպես յերևում է նաև հայ մատենագիրների վկայություններից, ստեղծվել էր նաև Հայաստանում:

«Հատեցրեց [Յեզիտը],—ասում է Ղևոնդը[4],—արծաթի գյուտը յերկրից և հնարավոր չեր վորևե մեկին, տալով յուր դույքը և կարողությունը, ձեռք բերել իր անձի փրկության գինը: Զարաչար չարչարանքով, գելոցով, կախաղանով և դառն տանջանքներով կեղում եյին մարդկանց կյանքը: Ուստի և շատերը, փախչելով այրերը և յերկրի փապարները՝ գաղվում եյին ու թաքնվում: Վոմանք ել ձյունախեղդ եյին լինում և դետն եյին իրենց ձգում անտանելի աղետի պատճառով»:

---

[1] Տես „О торговле и городах Армении", եջ 133—136:

[2] Տես «Ժամանակագրութիւն տեառն Միխայէլի Ասորւոց պատրիարքի», Յերուսաղեմ 1871, եջ 352:

[3] Ուշագրավ է, որ արաբական տիրապետության ժամանակ ստրուկների թիվը խիստ մեծ եր: Խալիֆ Մուավիան ունեցել է, որինակ, միմիայն Արաբիայի իր կալվածներում 4000 ստրուկ: Վոմանք ունեցել են մինչև ավելի քան 10.000 ստրուկ: Մեծ գին ունեին, մանավանդ, ստրուկ արհեստավորները:

[4] Տես Մալխասյանցի և Ցեղյանցի հրատարակությունը, Ս. Պետերբուրգ 1887, գլ. ԼԴ, եջ 135:

[«Զի վախճանեաց զգիւտ արծաթոյ ի յերկրէս, և ամենայն ոք տալով զպահարանս ընչից իւրեանց՝ ոչ գտանէին զգինս փրկանաց անձին իւրեանց. և չար կտտանօք, գելարանօք, և կախաղանօք և դառն տանջանօք կեղէին զկեանս մարդկան։ Յորմէ փախստեայ եղեալ բազումք յայրս և ի փապարս երկրի՝ զօղեալ թագչէին. և ոմանք ձիւնահեղձ և գետավէժ լինէին վասն անտանելի աղետիցն»։

Անհրաժեշտ է նույնպես մատնանշել, որ առաջին Աբբասյանների ժամանակ մոտ միայն անչափ ծանրացել էին Հայաստանի հարկերը, այլև սկիզբ էր դրվել նաև նախարարական ինքնավար կարգերի ու նախկին արտոնությունների վոչնչացման։ Ղևոնդի վկայությամբ (գլ. ԻԸ)՝ Աբբասյանները կարգադրել էին, որ հայկական հեծելազորի ռոճիկը պետք է վճարեն մոտ թե խալիֆայությունը, ինչպես այդ սահմանել էին Ոմեյանները, այլ իրենք հայ իշխանները։ Այսպիսով, ասում է Ղևոնդը, հեծելազորի պարտադիր ծառայությունը դառել էր «զրավաստակ աշխատութիւն»։

Պարզ է, որ հալածանքի նոր այս պայմաններում՝ խալիֆ ալ-Մանսուրը այլևս չէր կարող վստահություն ունենալ հայ նախարարների վրա։ 770 թվին նա Հասան վոստիկանի հետ թուրքական զորքեր ուղարկեց Հայաստան։

Այս վայրագ ու արյունարբու վարձկանները, որոնք ավերածությունների ու թալանի առիթ էին փնտռում՝ զազրելի բռնություններ գործեցին Հայաստանի բնակչության անխտիր բոլոր խավերի վերաբերմամբ։ Ցերկիրը մատնվեց այժմ սովի, սրի ու սարսափի։

Ցեվ շուտով արաբական տիրապետության դեմ բռնկվեց ընդհանուր ապստամբություն, որին մեծ չափով մասնակցում էին նաև ռամիկները։

* * *

Այս ապստամբությունը, որի մասին մանրամասն տեղեկություններ է հաղորդում Ղևոնդը, ուներ պարզապես ազատագրական բնույթ։ Նրա ճիշտ տարին, որը պատմագիտական յերկերում, մեծ մասամբ, սխալ է տրվում, վորոշվում է, ինչպես ցույց է տվել Ալիշանը[1], 774 թվին։

[1] «Այրարատ», Վենետիկ 1890, եջ 525։

Հուսահատված նախարարները, վկայում է Ղևոնդը՝

«Յերբ տեսան վոր մեծ վտանգ է իրենց վրա հասել՝ մահն աչքի առաջ ունեցան և ձեռնամուխ յեղան մի գործի, վորը չեր կարող հաջողություն ունենալ, վորովհետև իրենք քիչ եյին թվով։ Սակայն նրանք լավ համարեցին քաջությամբ մեռնել, քան ապրել տաժանալից»։

[«Իբրև տեսին նախարարք Հայոց զվտանգ տարակուսանացն հասեալ ի վերայ ինքեանց՝ եդին զոգի ի ձեռին իւրեանց և ձեռնամուխ եղեն յիրս, զոր ոչ կարէին վճարել վասն զի նուազունք էին։ Այլ սակայն լաւ համարեալ զմահ քաջութեամբ քան զկեանս վտանգաւոր՝ ձեռնամուխ եղեն յիրս ապստամբութեան»][1]։

Ինչպես և դրեթե միշտ՝ շարժման գլխավորը և ղեկավարը յեղան Մամիկոնյանները։ Ազատագրական ապստամբությունների առաջնորդ լինելը նրանք կարծես թե համարում եյին իրենց տոհմային պարտականությունը։

Առաջինը գլուխ բարձրացրեց արաբական բռնությունների դեմ Արտավազդ Մամիկոնյանը։ Նա յեկավ Դվին, վորը արաբական իշխանության վարչական կենտրոնն եր, արտաքուստ ցույց տվեց իբրև մտերիմ ու հավատարիմ և զինեց ու հանդերձեց այստեղ իր զորքը, պատրվակ բռնելով, վոր նախապատրաստություններ է տեսնում կռվի համար խալիֆայության թշնամիների դեմ։ Դվինից Արտավազդը շտապեց գնալ Կումայրի (=Լենինական), սպանեց այնտեղ հարկերի հրամանատարին և, վերցնելով նրա հավաքած հարկերը՝ գնաց իր ընտանիքի ու այլ նախարարների հետ Յեգերացոց աշխարհը, վորը գտնվում եր Բյուզանդիայի գերիշխանության տակ։

Չորս տարի հետո, 778 թվին, նույն այս Արտավազդը, վորին Բյուզանդական կայսրը նշանակել եր ստրատեգ և կառավարիչ Անատոլիկոն թեմի՝ կարողացավ սոսկալի վրեժ առնել արաբներից և, գործակցությամբ բյուզանդական յերեք նշանավոր հայ զորավարների՝ Տաճատ Անձևացու, Վարազտիրոցի և Գրիգորիոսի՝ մեծ ջարդ տվեց և սաստիկ հարված հասցրեց նրանց Գերմանիկե քաղաքի մոտ՝ Կոմմագենեյում։

Շուտով Արտավազդի որինակին հետևեց Մուշեղ Մամիկոն-

---

[1] Տես հրատարակություն Մալխասյանցի և Յեղյանցի, Ս. Պետերբուրգ 1887, եջ 137—138։

յանը, վորը կոտորեց արաբներին, վորոնք գտնվում էին նրա գավառում, և, գաղթելով ամբողջ իր տնով կաղզվանի շրջանը՝ ամբացավ Արտագերս բերդում։ Այստեղից նա ասպատակեց Բագրևանդ գավառը, կոտորեց հարկահավաքներին ու արաբական զորամասերը և դադարեցրեց հարկերի պահանջումը և բռնությունները։ Մուշեղի մոտ, ինչպես վկայում է Ղևոնդը (գլ. LԴ, եջ 139), հավաքվեցին բոլոր ճնշվածներն ու հարստահարվածները։ Արաբական զորքերը, վորոնց ուղարկել էին նրա դեմ Կարինից և Դվինից, վոչ միայն հաջողություն չունեցան, այլև մեծ ջարդ կրեցին ու մատնվեցին փախուստի։

Այնուհետև գրեթե բոլոր մյուս նախարարները ևս, Մուշեղի հաջողություններից սիրտ առած՝ միացան նրան իրենց զորքերով և ապստամբությունը դառավ համատարած ու ընդհանուր։ Ազատագրական այս շարժմանը մասնակցում էր նույնպես ռամիկ ժողովրդի բազմությունը։

Ահաբեկված արաբները, վորոնց գլխավոր հենակետերը Հայաստանում քաղաքներն էին՝ Դվինը, Կարինը, Արճեշը և այլ բաղաքավայրերը՝ ստիպված յեղան պատսպարվել այդ ամրություններում։ Յեվ հայերը, արաբական ծանր լուծից ազատվելու համար՝ պետք է աշխատեին, բնականաբար, գրավել թշնամու այդ կայանները։ Նրանք հարձակվեցին նախ գլխավոր ռազմակայաններից մեկի՝ Կարին քաղաքի վրա, վորը սահմանամերձ էր Բյուզանդիային, և, շրջապատելով քաղաքը, սկսեցին պաշարողական կանոնավոր ու յերկարատև գործողություններ՝ փորեցին խրամատներ ու աշխատեցին պարիսպների տակ ականներ անցկացնել։

775 թվի գարնան սկզբին վոտքի կանգնեցին արաբների դեմ Վասպուրականում Արծրունյաց ու Ամատունյաց նախարարները և ուղեցին հարձակվել արաբական նաև մի այլ մեծ կենտրոնավայրի՝ Արճեշ քաղաքի վրա։ Նրանք հավաքել էին իրենց հեծյալ ջոկատները, վորոնց ուղեկցում էին նաև հետիոտն ռազմիկները, Բերկրի գյուղի մոտ։ Սակայն հարձակումը դեռ չսկսված՝ Հայաստան խուժեցին հարավից, Խլաթ քաղաքի վրայով, խալիֆայության 30.000 ընտիր խորասանյան զորքերը Ամր զորավարի առաջնորդությամբ։

Աշոտ Բագրատունին, վորը չեր միացել ապստամբության, նախազգուշացրեց նախարարներին վերահաս վտանգի մասին։ Սակայն ապստամբները, համարելով այդ նախազգուշացումը նենգ-

ՀԱՅ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ Գ. ԴԱՐԱՆ

գություն՝ վճռեցին հարձակվել Արճեշի վրա։ Բայց այստեղ Ամրի զորքերը, վորոնք դարան եյին մտել, գրոհեցին նրանց վրա և, մատնելով հեծելազորը փախուստի, կոտորեցին, գլխավորապես, անդեն ու կռվի անվարժ հետիոտն ռամիկներին։ Նախարարներից սպանվեցին, ինչպես վկայում է Ղևոնդը, միայն չորս հոգի՝ յերեքը Տրունյաց տոհմից և մեկը Ուրծայ գյուղից։

Ղևոնդ պատմագրի մոտ մատնանշված է Արճեշի կռվի ամսաթիվը և որը՝ «յամսեանն հրոտից, որ օր չորրորդ էր ամսոյն յաւուր շաբաթու» (գլ. ԼԴ, եջ 147)։ Համաձայն այս վկայության՝ կռվի թվականը, ամսաթիվը և որը տոմարական հաշիվների ոգնությամբ ճշտիվ վորոշվում է 775 թվի ապրիլի 15-ին, շաբաթ։

Մինչդեռ այս անցքերը կատարվում եյին Արճեշի մոտ, պաշարված Կարինը, վորի մեջ սաստկացել եր սովը, արդեն մոտ եր անկման։ Սակայն Ամր զորավարի հաղթության լուրը վհատեցրեց ու լքում առաջ բերեց քաղաքը պաշարողների շարքերում։ Ապըստամբության ձախողումը և հետահաս տխուր վախճանը ակներև եյին։ Հայերն ունեյին Կարինի մոտ ընդամենը մոտ 5000 կռվող, վորոնց մեծ մասը կազմում եյին հետևակ ու թեթև զինված ռամիկները, մինչդեռ Ամրը դալիս եր նրանց դեմ, ունենալով իր հետ 30.000 լավ զինված հեծելազոր։

Հայկական վոգբաթիվ զորքը, ինչպես վկայում է Ղևոնդը, կարող եր հեշտությամբ խույս տալ թշնամու հետ ընդհարվելուց, վորը վեց անգամ ավելի զորավոր եր։ Բյուզանդիայի արևելյան սահմանները, ինչպես հայտնի յե, հեռու չեյին Կարին քաղաքից։ Սակայն ապստամբները, ասում է Ղևոնդը,—

> «լավ համարեցին մեռնել, քան տեսնել իրենց յերկրի կորուստը... և թեպետ իրենք թշնամիների թվից ավելի քիչ եյին՝ ինքնակամ հոժարությամբ յենթարկեցին իրենց կյանքը վտանգի և, ժողովելով իրենց զորագնդերը, մոտ 5000 հոգի՝ գնացին Կարին քաղաքից և անցան Բասենի վրայով Բագրևանդ գավառը»։
>
> [«սակայն լաւ համարեցան զմահ անձանց քան տեսանել զկորուստ աշխարհիս... թէպէտև նուազունք էին քան զթիւ թշնամեացն՝ ինքնակամ յօժարութեամբ դիմեցին ի վիշտն. և ժողովեալ զգունդս իւրեանց իբրև արս ԵՌ՝ գնացին ի

քաղաքէն կարնոյ, անցանէին ընդ սահմանս Բասենոյ է գաւառն Բագրեւանդ»][1]։

Յերկու բանակների ճակատամարտը տեղի ունեցավ Բագրեւանդ գավառում, Արածանի գետից դեպի հարավ, Արձնի գյուղի մոտ։ Սկզբում հայկական զորքը կատաղի կերպով հարձակվեց թշնամու գերազանց ուժերի վրա և կարողացավ շփոթություն առաջ բերել նրա շարքերում։ Սակայն շուտով Սմբի զորքերը վրա ընկան հայերի աննշան ուժերի վրա և, ժամանելով նրանց փախուստի՝ կոտորեցին մեծ մասը, գլխավորապես ռամիկ ժողովրդի։ Անվանի նախարարներից ընկան պատերազմի դաշտում Սմբատ Բագրատունի սպարապետը, նրա բարձակիցը և նիզակակիցը՝ Սահակ Բագրատունին, Մամիկոնյաններից՝ Մուշեղ զորավարը և Սամուելը, նաև Վահան Գնունին և ուրիշները։ Ապստամբությունը ճնշելուց հետո՝ արաբական զորավարն ասպատակներ սփռեց Բագրեւանդի ու նրա սահմանակից գավառների շրջաններում և յենթարկեց այդ յերկրներն ավերածության ու կողոպուտի։

Ղևոնդի վկայությամբ՝ ճակատամարտը Բագրեւանդում Արձնի գյուղի մոտ տեղի յեր ունեցել, ինչպես և Արճեշի կռիվը՝ հայկական հրոտից ամսում՝ «ի նոյն ամսեանն ի հրոտից ի ԺԴ յաւուր երկուշաբաթւոջ»[2]։ Համաձայն տոմարական պարզ հաշիվների՝ այս վկայության մեջ պետք է ուղղել ԺԴ (=14) թիվը և կարդալ «ի հրոտից ի ԺԳ [=13]»։ Այսպիսով ստացվում է ճշտիվ այս ճակատամարտի տարեթիվը, ամսաթիվը և որը՝ 750 թվի ապրիլի 24-ին, յերկուշաբթի[3]։

775 թվի ընդհանուր ազատագրական ապստամբությունը Հայաստանում պետք է համարել, անշուշտ, հայ ժողովրդի ամենամեծ հերոսամարտերից մեկը։ Մեռնել քաջությամբ և չթողնել իր հայրենի յերկիրը՝ այդ յեղել է միշտ նշանաբան հերոս ու քաջարի ժողովրդների։

---

1 Տե՛ս հրատար. Մալխասյանցի և Ցեղյանցի, Ս. Պետերբուրգ 1887, գլ. ԼԴ, եջ 148։

2 Նույն տեղ, եջ 151։

3 Արճեշի ու Արձնիի կռիվների թվականը պատմագիտական յերկերում, մեծ մասամբ, սխալ է վորոշված։ Տարեթիվը ճիշտ է ցույց տրված Ալիշանի «Այրարատ»-ում (եջ 525)։ Սակայն նրա մոտ ամսաթիվը վորոշված է սխալմամբ ապրիլի 25-ին։

* * *

775 թվի ապստամբության ճնշումից հետո՝ Հայաստանի պատմությունը ութերորդ դարի վերջին քառորդում անընդհատ մի ժամանակագրություն է պարբերական կոտորածների ու գաղթի, ծանր հարկապահանջության ու ավազակային կողոպուտների և ամեն տեսակ բռնությունների ու հալածանքների։

Արճեշի ու Արձնիի ճակատամարտերից հետո՝ ապստամբած հայ նախարարների ընտանիքները, գլխավորապես Բագրատունիները և Մամիկոնյանները, ստիպված յեղան լքել ու թողնել իրենց կալվածները Բագրևանդում ու հարավ-արևմտյան Հայաստանում և փախչել կամ Բյուզանդիա և կամ Հայաստանի լեռնային ամուր ու անմատչելի արևմտյան շրջանները, վորոնք մոտ եյին կամ սահմանակից Բյուզանդական կայսրության։

Լքված վայրերում նախարարական կալվածներն անցան հետզհետե, գլխավորապես, մահմեդական ու արաբ եմիրների և կալվածատերերի ձեռքը, վորոնք իրենց նոր կալվածներում բնակեցնում եյին, մեծ մասամբ, Հայաստան ներդաղթած արաբական ցեղեր։ Ութերորդ դարի վերջում և իններորդ դարի սկզբներում Հայաստանի այս մասերում կազմվեցին մահմեդական յերկու մեծ ու հզոր իշխանություններ՝ Մանազկերտի ու Արզնի ամիրայությունները։ Այժմ արդեն սկսել եյին աստիճանաբար քայքայվել նախարարական նաև այլ շրջանները, և Հայաստանի մեծագույն մասի մեջ հետզհետե տեր ու տնորեն եյին դառել մահմեդական ու արաբ իշխանավորները։

Նկարագրելով այս ժամանակաշրջանի պատմական անցքերը՝ Հովհաննես Դրասխանակերտցին տալիս է հայ նախարարությունների քայքայման մասին հետևյալ կարևոր վկայությունը։

«Յեվ վորովհետև,—ասում է Դրասխանակերտցին,—հագարացիները վերցրին ու բոլորովին տեր դառան Հայաստանին, իսկ յերկրի մեծամեծները պակասեցին և մնացածները թաղնվել եյին, ծառայելով նրանց լուծի տակ՝ դրա համար էլ մեր պատմության այս մասում քիչ են զրույցները մեր իշխանների մասին։ Յեվ յեթե թերևս վորևե մի բան գտնվի՝ թող քեզ բավական լինի այն, ինչ վոր ինձնից առաջ պատմել է Շապուհ պատմագիրը»։

[«Եւ վասն զի սպառասպուռ Հագարացիքն տիրեցին կալան զՀայաստանեայս և մեծամեծք աշխարհիս նուազեցան, և

Մնացեալք զողեալ դադարեալ կային ընդ լծով ծառայութեան նոցա. սակս այսորիկ իսկ յայսմ վայրի պակասեաց ի Պատմութենէ աստի զրոյցք իշխանաց մերոց, բայց եթէ գուցէ գտցի ինչ՝ բաւական քեզ բերցի նախ քան զմեզ պատմեալն ի Շապհոյ պատմագրէ»][1]։

Ուշագրավ տեղեկություն և հաղորդում նմանապես Ղևոնդ պատմագիրը հայ ռազմիկ ժողովրդի վողորմելի վիճակի մասին ութերորդ դարի վերջերում։ Նշելով մոտ 12.000 հայերի, զլխավորապես ազնվականների ու հեծյալների, գաղթը Հայաստանից Բյուզանդիա Շապուհ Ամատունու առաջնորդությամբ (հավանորեն, 791 թվ.)՝ Ղևոնդը պատմում է, որ

«ժողովրդի կեսը, որ մնացել էին յերկրում՝ սաստիկ կարոտության պատճառով անձնատուր յեղան ստրկական ծառայության և դառան նման գաբավոնացիներին փայտ կոտրողներ և ջուր բերողներ»։

[«Իսկ կէսք ժողովրդեանն որք մնացին՝ առ սաստիկ կարօտութեանն անձնատուրք եղեն ի ծառայութիւն ստրկի, փայտակոտորք և ջրաբերք ըստ նմանութեան Դաբաւոնացւոց»][2]։

Ինչպես տեսնում ենք վերոհիշյալ և նման վկայություններից, 775 թվի անհաջող ապստամբությունից հետո հայկական նախարարությունները վոչ միայն մեծ չափերով զրկվել էին իրենց ինքնավարական իրավունքներից ու արտոնություններից, այլև, կորցնելով ռազմական ու դիմադրական նախկին իրենց ուժը, սկսել էին արդեն նվազել ու քայքայվել։

Գտնվելով ծանր կացության մեջ՝ հայկական բարձր ազնվականությունը, պահպանելու համար իր կալվածներն ու արտոնված դրությունը՝ հարկադրված եր այժմ հարմարվել ու համակերպվել տիրողներին։ Վոմանք նրանցից, ինչպես, որինակ, Մեհրուժան Արծրունին՝ ընդունել էին մահմեդական կրոնը։ Ութերորդ դարի վերջին հենց քառորդից սկսած հայկական բարձր ազնվականությունն աշխատում եր բարեկամանալ ու խնամիանալ արաբական եմիրների ու իշխանավորների հետ խառն ամուսնությունների միջոցով։ Համակերպման վորոշակի նշաններ կարելի յե համարել նաև այն, որ այս ժամանակներից սկսած հետզհե-

---

1 Տես «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ, Պատմութիւն Հայոց», Թիֆլիս 1912, եջ 111։

2 Տես վերոհիշյալ 1887 թվի հրատարակությունը, գլ. ԽԲ, եջ 169։

տե սովորական եյին դառնում հայ աղնվականների շրջանում նրանց արաբականացրած անունները, ինչպես՝ Աբուլ-Աբաս, Աբու-Մրվան, Աբու-Սահակ, Աբու-Մուսա և այլն։

Հայկական ֆեոդալիզմն ապրում եր ըստ իս ութերորդ դարի վերջերում՝ ավերումների, փախուստի, մեծ դաղթերի ու յերկրի ամայացման վերոհիշյալ խռովահույզ շրջանում՝ իր ծանր հոգեվարքը։ Թվում եր, վոր նրա վերջնական քայքայումն անխուսափելի յե։ Սակայն շուտով, ինններորդ դարի առաջին հենց կիսում, նրա վերակենդանացման համար ստեղծվեցին հանկարծ քաղաքական միանգամայն նպաստավոր ու նոր պայմաններ։ Ինններորդ դարում նա հետզհետե վոչ միայն նորից ուժեղացավ, այլև ապրեց Բագրատունյաց թագավորության շրջանում տնտեսական ու քաղաքական բուռն ու աննախընթաց վերելքի շրջան։

* * *

Նախարարական Հայաստանի վերստին զորեղացմանը մեծապես նպաստեցին խալիֆայության մեջ ծայր առած խռովություններն ու ներքին պատերազմները, վորոնք դրեթե անընդհատ եյին դառել ինններորդ դարից սկսած։

Բագրատունիները, վորոնք 775 թվի ապստամբությունից հետո ապավինել եյին Հայաստանի լեռնային արևմտյան շրջանները և գտնվում եյին այստեղ Բյուզանդիայի հովանավորության տակ, ուշիուշով հետևում եյին քաղաքական անցքերին խալիֆայության սահմաններում։

793—794 թվականներին Պարթավում և Փայտակարանում բռնկվեց պարսիկ աղանդավորների մեծ ապստամբությունն Ատա ել-Մոկաննայի առաջնորդությամբ։ Ապստամբները վոչ միայն կարողացան մի քանի անգամ պարտության մատնել իրենց դեմ ուղարկված արաբական վոստիկաններին, այլև իրենք հարձակման դիմեցին ու մոտ չորս ամիս պաշարեցին Հայաստանում Դվին քաղաքը։ Նկարագրելով այս անցքերը՝ արաբական մատենագիր Յակուբին իր «Պատմության» մեջ առանձնապես մատնանշում է, վոր այնուհետև «Հայաստանի ուժը զորացավ»[1]։

Ներքին մեծ խռովություններին զուգընթաց վերսկսվեցին այս ժամանակ կատաղի ու անվերջ պատերազմները խալի-

[1] Տե՛ս Մարկվարտ, Բագրատունիների ծագումը, Վիեննա 1915, եջ 38։

ֆայությանն ու. Բյուզանդիայի և խալիֆայության ու խազարների միջև։ Այս պայմաններում հայկական նախարարությունների մինչևիսկ հյուծված ու թուլացած մնացորդները ստանում էին, բնականաբար, քաղաքական վորոշ կշիռ ու նշանակություն։ Բագրատունիները, մանավանդ նրանք, վորոնք ապաստան էին գտել Բյուզանդիայի սահմանամերձ լեռնային շրջաններում—Սպերում, Տայքում ու Կղարջքում—և բարեկամություն էին հաստատել կայսրության հետ, կարող էին այժմ առանձնապես վտանգավոր լինել խալիֆայության համար։ Ուստի և խալիֆ Հարուն ար-Ռաշիդը (785—809 թ.թ.) հարկադրված յեղավ վարել նրանց հանդեպ մեղմ ու զիջող քաղաքականություն։

Հենց այս Հարուն ար-Ռաշիդի ժամանակ Բագրատունի Աշոտ Մսակերը, Արձնիի կռվում սպանված Սմբատ սպարապետի վորդին, կարողացավ մասամբ զրամով և մասամբ զենքով հաստատել իր իշխանությունը Տայքում, Արշարունիքում, Շիրակում և Աշոցքում։ Նոր գրավված այս շրջաններում Բագրատունի այս ճյուղի կենտրոնը դառավ նախ Բագարանը, Ախուրյան գետի վրա, իսկ հետո՝ «Երազգաւորք-Շիրակաւանը»։ 806 թվին Հարուն ար-Ռաշիդը կարգեց Աշոտ Մսակերին իշխան Հայաստանի, և այնուհետև Աշոտն իր նվաճումները շարունակեց ավելի մեծ հաջողությամբ։

Հայաստանում խիստ ուժեղացել եր այդ ժամանակ Մանազկերտի ամիրայությունը, վորը գրավել եր Հայաստանի զգալի մասը և նպատակ եր դրել իրեն հիմնել առանձին, խալիֆայությունից անկախ, մի մեծ պետություն և միացնել իր իշխանության տակ նախարարական հայ յերկրները Վանա լճից մինչև Արաքս գետը։ Մանազկերտի ամիրաները, վորոնք ծագում էին Ասորիքի կայսիտների արաբական ցեղից և հայ մատենագրության մեջ անվանված են «Կայսիկք», ըստ յերևույթին, անհաշտելի հակառակորդներ էին Իրաքի իշխող արաբական ցեղերին և Աբբասյաններին։ Իններորդ դարի առաջին քառորդում սրանք մի քանի անգամ ապստամբեցին Դվինի ու Պարթավի վոստիկանների դեմ, և Աշոտ Մսակերն ու նրա յեղբայրը, Շապուհը, ոգտվելով նաև այս խռովություններից, կարողացան յետ գրավել նրանցից ամբողջ Տարոնը։

Բագրատունիների և հայկական նախարարությունների զորեղացման համար նպաստավոր յեղան նմանապես և գահակալական հաստատ կռիվները խալիֆայության մեջ Հարուն ար-Ռաշիդի

վորդիների՝ Մամունի և Նոյինի միջև 809—813 թվերին։ Հայ նախարարները ժամանակին կարողացան անցնել Մամունի կողմը և ոգուտ քաղեցին և այս յերկպառակություններից։

Ներքին այս խռովություններից մի քանի տարի հետո, 817 թվին, բռնկվեց արևելյան Անդրկովկասում պարսիկ աղանդավորների մեծ ապստամբությունը Բաբեկի առաջնորդությամբ, վորին իրեն հռչակեց «Մահդի», այսինքն՝ աստվածային եյության մարմնացում։ Այդ անավոր շարժումն ուներ միաժամանակ թե սոցիալական և թե ազատագրական բնույթ։ Ապստամբները պահանջում եյին, նման Մազդակյաններին, գույքերի, հարստությունների և կանանց հավասար բաշխում և միևնույն ժամանակ նպատակ եյին դրել իրենց տապալել արաբական իշխանությունը և վերահաստատել պարսկական նախկին աշխարհակալությունը։ Բաբեկը, վորին հայ պատմագիրները անվանում են Բաբան, մոտ քսան տարի ահ ու սարսափի մեջ պահեց արաբներին և, ջարդ տալով անընդհատ նրանց զորքերին, տիրեց արևմտյան Մարաստանին, Համադանին, Աղվանքին և արևելյան Հայաստանին։ Ապստամբությունը վերջնականապես ճնշվեց միմիայն 837 թվին, և Բաբեկը, վորին կենդանի բռնել եր Աղվանքի և Շաքեյի իշխան Սահլը, գլխատվեց Բաղդադում 838 թվին։

Բաբեկի ապստամբության ճնշման ժամանակ խալիֆայության զորքերի հետ միասին կռիվներին մասնակցել եյին նաև հայ նախարարներն ու նրանց զորքերը։ Յեվ այսպիսով՝ նրանք ոգավեցին մեծ չափով նաև այս յերկպառակություններից՝ ամրացրին իրենց քաղաքական դիրքերը և հնարավորություն ունեցան գրավելու նոր ու նոր շրջաններ և կալվածներ։

Ութերորդ դարի վերջերում Բագրատունիները և հայկական այլ նախարարությունները, 775 թվի մեծ ապստամբությունից հետո, ինչպես տեսանք, սկսել եյին արդեն քայքայվել և գրեթե մահամերձ եյին։ Սակայն իններորդ դարի քառասնական թվականներին հատկապես Բագրատունիները վոչ միայն կարողացել եյին վերականգնել իրենց նախկին հզորությունը, այլև ավելի եյին զորեղ, քան ութերորդ դարում՝ նախքան ապստամբությունը։

Աշոտ Մսակերի մահից հետո (826 թ.) Բագրատունյաց տոհմի տարբեր ճյուղերը տեր եյին դառել և իշխում եյին թե իրենց հին կալվածների մեծագույն մասում և թե համարյա ամբողջ արևմտյան Անդրկովկասում։

Հիշատակության արժանի յեն մասնավորապես, բացի Բագրատունիների Շիրակի ճյուղից, նաև Կղարջքի ու Արտանուջի Բագրատունիները։ Աշոտ Մսակերի հորեղբայրը՝ Վասակը, վորը 775 թվի ապստամբությունից հետո ստիպված եր փախչել Կղարջք՝ հիմնել եր այստեղ Արտանուջի իշխանությունը։ Սրա հաջորդները կարողացել եյին նույնպես ընդարձակել իրենց իշխանության սահմանները և գրավել եյին Բոլավերը և Արդահանը։ Հետագայում նրանք, տարածվելով Կուր գետի հովիտներով դեպի հյուսիս-արևելք և տիրելով հետզհետե ամբողջ Վրաստանին՝ հիմնադիր յեղան նոր հարստության Վրաստանում։

Իններորդ դարի առաջին կեսի վերջերին հայկական նախարարությունները, գլխավորապես Բագրատունիները և Արծրունիները, այնքան եյին ուժեղացել, վոր ձգտում եյին արդեն վերականգնել ամբողջությամբ իրենց արտոնությունները և ընդլայնել ըստ հնարավորության քաղաքական իրենց իրավունքները և ներքին անկախությունը։

* * *

Աշոտ Մսակերի մահից հետո (826 թ.) Հայաստանի սպարապետ կարգվեց նրա վորդին՝ Սմբատ Աբլաբասը, իսկ «հրամանատար» և «իշխանաց իշխան» նշանակվեց Բագարատ Բագրատունին՝ Տարոնի իշխանը։ Հայկական նախարարությունները, ոգտվելով այժմ արաբական իշխանության թուլությունից՝ այլևս չեյին հանդուրժում Հայաստան ուղարկված կառավարիչների խստություններն ու բռնությունները։ Նրանք դիմում եյին հաճախ խալիֆներին և պահանջում, վոր Հայաստան ուղարկվեն իրենց ցանկացած մարդիկ։ 840 թվին, որինակ, հայ նախարարները Սմբատ սպարապետի գլխավորությամբ ստիպեցին խալիֆ ալ-Մուտասիմին յետ կանչել նոր նշանակված Խալիդ վոստիկանին և թողնել այդ պաշտոնի մեջ Ալիին։ Այս վերջինը, վորին նրանք անվանում եյին «եթիմ», այսինքն՝ վորբ, ցանկալի յեր նրանց իր թուլության և մեղմության պատճառով։

842—847 թվականներին, ալ-Վատեկի խալիֆայության ժամանակ, ամբողջ Հայաստանը, ինչպես վկայում են արաբական աղբյուրները, գտնվել և շարունակ խառնակ ու ապստամբական վիճակում։ Այդ աղբյուրների վկայություններից դժվար չե նաև կռահել, վոր Բագրատունիները, ինչպես և Արծրունիները, տես-

նելով խալիֆայության ռազմական ու քաղաքական տկարությունը՝ ուղեցել են, ըստ յերևույթին, հետևել հարևան մահմեդական ամիրայությունների որինակին և աշխատել են ազատագրվել արաբական տիրապետությունից։ Սակայն շուտով յերևաց, վոր նրանց այս հույսերը վաղաժամ եյին։

847 թվին խալիֆայության գահը բարձրացավ Մութավաքիլը (847—861 թ. թ.), վորը, վարում եր վճռական ու հաստատակամ քաղաքականություն։ Իր իշխանության հենց առաջին տարիներում նա նպատակ եր դրել իրեն, ինչպես վկայում ե Թովմա Արծրունին (II, գլ. Ե), ճնշել և պատժել ըմբոստ հայ նախարարներին։

849 թվին նա ուղարկեց Հայաստան Աբուսեթին իբրև վերակացու և հարկահավաքման գլխավոր։ Յերբ սա մոտեցավ Տարոնի սահմաններին՝ իշխանաց իշխան Բագարատը, տեսնելով վոր Աբուսեթն ունի իր հետ հզոր զորաքանակ՝ շտապեց վճարել նրան ամբողջ հարկագումարը և խնդրեց, վոր նա ներս չմտնի իր զորքերով Հայաստան։ Թովմա Արծրունին վկայում ե, վոր Մութավաքիլը և Աբուսեթն ուղեցել են զրկել իշխանությունից հատկապես Բագարատին և Աշոտ Արծրունուն։ Սակայն յերբ Աբուսեթը տեղեկություն ստացավ, վոր Բագարատն ու Աշոտը դաշինք են կնքել և գործում են միասին՝ նա խուսափեց կռվից և վերադարձավ Բաղդադ։ Նախ քան հեռանալը՝ նա թողեց վորպես փոխանորդ և Հայաստանի կառավարիչ ու հարկահավաք Մուսեյին, վորը ստորին Աղձնիքի և Արզն քաղաքի ամիրան եր և Բագարատի քրոջ ամուսինն եր։

850 թվին Մուսե ամիրան, վորը կռված եր իր անբարեկամի հետ՝ մտավ իր զորքերով Տարոն իբրև հարկահավաքման համար։ Բայց Բագարատին ոգնության հասավ անմիջապես Աշոտ Արծրունին, և Բագարատը Վասպուրականի զորքերի ոգնությամբ այնպիսի ջարդ տվեց արաբներին, վոր Մուսեն հազիվ կարողացավ իր գլուխն ազատել։ Տարոնի այս կռվից դեռ առաջ Աբուսեթն ուղարկել եր նաև Վասպուրական հարկահավաքման հազարապետ Ալա Ծովափիին, վորը Մանազկերտի «Կայսիկք» կոչվող ամիրաների տոհմից եր։ Սա, հաստատվելով Աղբադում, ասպատակել եր Վասպուրականի գանազան շրջանները, մտնելով յերկիրն ավերածության և կողոպուտի։ Բայց Աշոտ Արծրունին մեծ ջարդ տալով նրան՝ դուրս եր քշել Վասպուրականից։

Զայրացավ Մութավաքիլն այս անցքերը լսելով և նորից

ուղարկեց Հայաստան Արուսեթին, հանձնարարելով նրան ձերբակալել Բագարատին և Աշոտին։ Արաբական զորքերը, ներխուժելով Տարոն և Վասպուրական՝ պետք է վերացնեին առաջին հերթին հայկական այս իշխանությունները։ Արշավանքի ժամանակ, դեռ Հայաստան չհասած՝ ճանապարհին մեռել էր Արուսեթը։ Ուստի և վոստիկանության սրա պաշտոնը և վերոհիշյալ հանձնարարությունները տրվեցին վորդուն՝ Յուսուֆին։

851 թվին Յուսուֆը մեծ ու ընտիր զորքով յեկավ նախ Վասպուրական և բանակեց Արծրունիների Աղամակերտ վոստանում։ Այստեղից նա ուղարկեց յերկրի զանազան կողմերն ասպատակներ և միաժամանակ հրավիրեց իր մոտ Աշոտին ու ուզեց նրան խաբեությամբ ձերբակալել։ Բայց Արծրունյաց իշխանը, վորին հայտնել եյին այդ մասին, վերցրեց իր ազատազորքը և հեռացավ Մարդաստան։

Շուտով Յուսուֆը հաշտություն և խաղաղություն հաստատեց Աշոտի հետ և, վերցնելով նրանից պատանդներ ու ապահովելով իր թիկունքը՝ յեկավ Ալաթ։ Բագարատն այժմ ինքն իրեն եր թողնված։ Ինչպես վկայում է Թովմա Արծրունին (Դպր. II, գլ. 2), Յուսուֆը հայտնեց Բագարատին, վոր ձմեռվա ցրտերի պատճառով ինքը շտապում է վերադառնալ արքունիք և ուզում է Հայաստանի իշխանությունը նրան հանձնել։ Տարոնի իշխանը, վոր խաբվել ու յեկել եր նրա մոտ, շղթայվեց և ուղարկվեց Սամառա, ուր գտնվում եր Մութավաքիլը։

Այնուհետև Հայաստանի զանազան կողմերն ուղարկվեցին կուսակալներ, վորոնք ամեն տեղ մեծ անգթություններ գործեցին։ Իսկ Տարոնում արաբական զորքերը մեծ թվով գերիներ վերցրին և նրանց մի մասը չնչին գներով ծախեցին Ասորիքում ու այլ յերկրներում և մյուս մասը պահեցին Մուշ քաղաքում, վոստիկանի ու իրենց ձմեռանոցում՝ վորպես ծառաներ։ Գարնանը նրանք մտադիր եյին սրի ու ավերածության մատնել ամբողջ Հայաստանը, և վճռել եյին, վերացնելով հայկական իշխանությունները՝ հաստատել յերկրում իրենց անմիջական տիրապետությունը։

Հայաստանի դրությունը դառնում եր այժմ նույնքան աղետալի, ինչպես և ութերորդ դարի վերջերին։ Վտանգը սպառնում եր դարձյալ վոչ միայն նախարարական իշխանական դասին, այլ ամբողջ հայ ժողովրդին։ Ուստի և այժմ ևս տարբերային կերպով բռնկվեց ընդհանուր ապստամբություն, վորն ուներ, ինչպես և

775 թվին, ազատագրական ընույթ։ Այս մեծ ապստամբությունը, հատկապես Տարոնում տեղի ունեցած անցքերը 852 թվին՝ մանրամասն նկարագրված են Թովմա Արծրունու մոտ և հիշատակված են նաև արաբական աղբյուրներում։

Թովմա Արծրունու համապատասխան այդ վկայությունը մեջ եմ բերում առանց կրճատումների։

«Այն ժամանակ,— պատմում է Թովման,— լեռան բնակիչները, տեսնելով վոր իշխանին դերի տարան և վոր իրենց ևս նույնը պիտի վիճակվի, ինչ վոր դաշտեցիներին՝ յեկան միասին Խուլթի մեկնակազենների բազմությունն արվեստագիտության իրենց ռազմամիջոցներով, վոր ձեռք եյին բերել ձմեռային ինքնապաշտպանության կարիքների համար։ Նրանք վերցրել եյին իրենց նիզակները, վոր միշտ կրում եյին, զգուշանալով անտառների վորջերում գտնվող գազաններից կամ իրենց վրա հարձակվող թշնամիներից։ Գրոհ տալով քաղաքի [Մուշի] վրա ու պաշարելով նրան՝ նրանք սրի մատնեցին և կոտորեցին զորքերը, ազատեցին բանտից Վասպուրականի պատանդներին, արձակեցին գերիներին և բաժանեցին իրենց մեջ թշնամու թալանը»։

[«Յայնժամ բնակիչք լերինն իբրև տեսին, թէ վարեցաւ իշխանն ի գերութիւն, ինքեանք պատրաստեալ են զնոյն փարշմանն կրել զոր դաշտայինքն կրեցին՝ հասին միաբան բազմութիւնն մեկնակազէնքն Խուլթայ ի հնարս արուեստագիտութեանն իւրեանց, զոր ի պէտս օժանդակութեան ձմերայնոյ հնարաւորեալ էին։ Եւ բարձեալ աշտեայս հանապազակիրս ի պատրաստութիւն գազանացն որ ի մայրին որջանան, կամ թշնամեաց ի վերայ հասելոց, և եկեալ ի վերայ քաղաքին պաշարեն զնա, և զզօրսն մատնեն ի սատակումն սրոյ, և զպատանդսն Վասպուրականի հանեն յարգելանէն. և գերեացն ընդարձակեն, զկապուտ նոցա բաժանեն յինքեանս»][1]։

Իր այս վկայության շարունակության մեջ Թովմա Արծրունին նմանապես հաղորդում է, վոր Սասունի լեռնականները, վորոնք հարձակվել եյին արաբական զորքի վրա Խուլթեցի Հովհաննի

---

[1] «Թովմայի վարդապետի Արծրունւոյ, Պատմութիւն տանն Արծրունեաց», հրատ. Պատկանյանի, Ս. Պետերբուրգ 1887, Դպր. II, գլ. Է, եջ 119—120։

առաջնորդությամբ, այս կովում սպանել էին նաև իրեն՝ Յուսուֆ վոստիկանին։

Առանձնապես ուշագրավ է, վոր ապստամբած սասունցիները, ինչպես յերևում է Թովմայի վկայություններից, վոչ թե «աղատ»-ներ կամ ազնվականներ էին, այլ պարզապես ռամիկ գյուղացիներ։

Նրա հաղորդած տեղեկությունները Խութեցիների մասին այնքան կարևոր են ու հետաքրքիր, վոր կարևոր եմ համարում մեջ բերել ամբողջությամբ։

«Այստեղ համառոտ կերպով կտամ,—ասում է Թովմա Արծրունին,—լեռան բնակիչների նկարագիրը՝ թե ինչպիսիք են և կամ ովքեր են, կամ ինչ կերպ նրանք ծանր աշխատանքով և սաստիկ տառապանքներով հայթայթում են իրենց ապրուստը և բավարարում իրենց կարևոր պետքերը։ Նրանց բնակությունները գտնվում են խոր ձորերում, լեռների փապարներում, անտառների թավուտներում և լեռների գագաթներում։ Ապրում են ազգատոհմերով և այնքան միմյանցից հեռու յեն, վոր յեթե զորավոր տղամարդկանցից մեկը բարձր տեղից ուժգին բղավե, նրա ձայնի բոմբյունը հաղիվ կարող է վորևե տեղ լսվել, և տպավորություն է գործում, իբր թե արձագանք է ժայռերի միջից։ Նրանց կես մասը խոտորել և հայրենի բնական լեզվից, վորովհետև հեռու տեղեր են բնակվում և միմյանց հետ չփում չունեն. խոսում են իրար հետ կցկտուր ու ոտարոտի լեզվով։ Յեվ այնքան խրթնախոս են և իրար անծանոթ, վոր մինչևիսկ պետք ունեն թարգմանների։ Իբրև սնունդ գործադրում են դանազան ընդեղեններ, գլխավորապես կորեկ կոչվող բույսը, վորը սովի տարիները վոմանք անվանում են հաց։ Կորեկը նրանք վոռոգում են վոտքերով (°) անտառների բաց տեղերում կամ ցանում են յերկմատանի փայտատներով։ Իրենց մերկությունը ծածկելու համար հագնում են բրդեղեն շորեր. վոտնամանները պատրաստում են կոշիկների ձևով այծերի մորթերից։ Թե ամառը և թե ձմեռը բավարարվում են միևնույն սնունդով և միևնույն հագուստով»։

[«Աստանօր սակաւուք բացայայտեցից զորպիսութիւն բնակչաց լերինն. թէ զիաՀդ կամ Հրպիսի ոք են, և Հրպէս հնարաւորեալ յապրուստ անձանց վճարեն զկարևոր պէտս

իւրեանց լի աշխատութեամբ և սաստիկ տառապանօք. և բնակութիւն նոցա ի խորաձորս և ի փապարս լերանց և ի պրակս ժայրեաց, ի գագաթունս լերանց։ Եւ բնակեն առանձին ըստ տունս ազգաց, և այնչափ ի բացեայ են ի միմեանց՝ մինչ թէ ոք յարանց զօրաւորաց ի բարձրաբերձ տեղեաց ուժգին խանչիցէ՝ հազիւ թէ ուրեք կարիցէ առնուլ զբոմբիւն ձայնին, իբրև ի վիմաց ինչ արձագան լինելոյ կարծիս բերելով. և կէսքն վրիպեալք ի բնական հայրենի լեզուէն, յաղագս հեռաբնակ լինելոյ և անհամբոյրք միմեանց հանդիպեալք, և խօսս միմեանց եղեալ կարկատուն ժուրացածի բանիւք։ Եւ այնքան խրթնի անծանօթք պատահեն առ միմեանս, մինչև թարգմանաց անգամ կարօտանան. և զպէտս կերակրոցն վճարեն ի սերմանց ինչ, առաւել ի կորեակ կոչեցեալ սերմանէն, զոր ոմանք ի սով ժամանակի հաց անուանեն. և զնոյն ուռոգեալ ոտիւք ի միջոցս պրակացն, կամ երկմատնի փայտատովք սերմանեալ. և է զգեստ նոցա ասուիս ի ծածկոյթ մերկութեանն, և օդ ոտիցն հնարաւորեն զձև կաւշկաց, ի մորթոց այծից կազմեալ, և միով կերակրով և միով հանդերձիւ բաւականան զամառն և զձմեռն»][1]։

Թովմա Արծրունու այս վկայության մեջ, ինչպես տեսնում ենք, խիստ հետաքրքիր տեղեկություններ են հաղորդված Սասունի բնակչության մասին։ Այդ տեղեկություններից յերևում է, որ մինչևիսկ ինքներորդ դարում խութեցիները գտնվում էին զեռ տնտեսական ու սոցիալական նախնական վիճակում՝ ապրում էին ազգատոհմերով և ունեին յերկրագործական հետամնաց տնտեսություն։

Ուշագրավ է մասնավորապես, որ խութեցիների մի մասը խոսել է, ըստ յերևույթին, մոչ թե հայերեն, այլ ինչ որ խրթին ու անհասկանալի լեզվով։ Թովմա Արծրունին մեջ բերված վկայության շարունակության մեջ այդ լեզուն համարում է «խրթնի և անհետազոտելի» և այդ լեզվով խոսող ապստամբներին անվանում է «գռեհիք Ասորոց»։ Հենվելով սակայն նորագույն ուսումնասիրությունների վրա՝ կարելի յե ըստ իս ամենայն հավանությամբ հետևցնել, որ դրանք մոչ թե ասորի գռե-

---

[1] Տես «Թովմայի վարդապետի Արծրունւոյ, Պատմութիւն տանն Արծրունեաց», հրատ. Պատկանյանի 1887, Դպր. II, գլ. Է, եջ 120—121։

հիկները եյին, այլ, հավանորեն, խալդեր կամ ուրարտացիներ, վորոնք, ինչպես հայտնի յե, ձուլվել եյին հետզհետե յեկվոր արմենների հետ և համարվում են, ինչպես և արմենները, հայերի նախնիքները։ Թովմա Արծրունու վկայությունը խիստ արժեքավոր է, վորովհետև ցույց է տալիս, վոր հին խալդերի մնացորդները պահպանվել եյին մինչև ինններորդ դարը լեռնային Սասունում։

852 թվի ընդհանուր մեծ ապստամբությունը, վորը պարզապես ժողովրդական-ազատագրական բնույթ ուներ, ճնշվեց դաժան ու անողոք խստությամբ։ Մութավաքիլն ուղարկեց Հայաստան մոտ յերկու հարյուր հազար թրքական և արաբական զորք Բուղայի առաջնորդությամբ, վորը սրի, գերության ու ավերածության մատնեց ամբողջ յերկիրը և, ամենից առաջ, չարաչար պատժեց Տարոնի և Սասունի բնակիչներին։ Հայ նախարարները և գլխավորները կալանավորվեցին և ուղարկվեցին Սամառա, ուր նրանք, փրկելու համար իրենց կյանքը և գույքը՝ գրեթե բոլորն ընդունեցին մահմեդականություն։

Բուղայի արշավանքից հետո՝ նախարարական Հայաստանը, վորը սոսկալի հարված եր ստացել, թվում եր, վոր անկարող կլինի ուշքի գալ և վերակենդանանալ։ Սակայն շուտով, ինչպես և 775 թվի ապստամբությունից հետո, նա վոչ միայն կարողացավ վերականգնել իր նախկին հզորությունը, այլև ունեցավ տնտեսական, քաղաքական և կուլտուրական բուռն և անորինակ վերելքի շրջան։

Ինններորդ դարի յերկրորդ կիսին սկսվեցին Բյուզանդական կայսրության հաղթական արշավանքները Հայաստանի սահմանամերձ հարավ-արևմտյան շրջաններում, և խալիֆայությունը, վորը շարունակ պարտություն եր կրում, հետզհետե թուլացավ և դիմեց դեպի անկում։

867 թվին դահ բարձրացավ Բյուզանդիայում Մակեդոնիայից Պոլիս յեկած Բարսեղ անունով մի հայ։ Սա մինչ այդ բյուզանդական արքունիքում ախոռապան եր և իր գեղեցկության պատճառով պալատական կանանց առաջին սիրելին եր։ Գերմանական գիտնական Հ. Գելցերը իր «Բյուզանդական կայսրների պատմության» մեջ ասում է, վոր Բարսեղ Ա. կայսրը (867-886թ.)՝ Մակեդոնական դինաստիայի հիմնադիրը՝ «այն հանճարեղ ու անսահման ուժեղ բնավորություններից եր, ինչպես Սուլլան, Թեո-

դորիխը, Խլոդովիխը և Նապոլեոն Ա-ը[1]։ Հենց այս Բարսեղն էր, վոր քայլ առ քայլ ջախջախիչ հարվածներով վոչնչացրեց արաբների պաշտպանողական ամրացրած դիրքերն արևելյան սահմաններում և կարողացավ ներխուժել Միջագետք։ Հաղթական այս առաջխաղացման ժամանակ նախարարական Հայաստանի կողմնորոշումը ստանում էր, բնականաբար, խիստ կարևոր նշանակություն։ Ֆրանսիական գիտնական Լորանի կարծիքով՝[2] Բարսեղ Ա-ի հաղթությունը կլիներ լիակատար, յեթե հայերը ևս հարձակվեին արաբների աջ թևի վրա և ոգնեին նրան մտնելու խալիֆայության կենտրոնական յերկրները։ Հայաստանի ստրատեգիական սպառնական այդ դիրքային դրությամբ է բացատրվում, Լորանի կարծիքով, խալիֆայության քաղաքականության կտրուկ փոփոխությունը հայ նախարարների և հատկապես Բագրատունիների հանդեպ։ 885 6 թվին Աշոտ Բագրատունին ստացավ խալիֆ Մուտամիդից (870—892 թ. թ.) թագ և թագավորական տիտղոս։ Սկսվեց ֆեոդալական Հայաստանի արագ վերածնության ու զորեղացման մի նոր շրջան, վոր տևեց մինչև սելջուկյան արշավանքները։

ԼԵՆԻՆԳՐԱԴԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՏՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

---

[1] Տես Մեսրոպ Տեր-Մովսիսյանի հայերեն թարգմանությունը, Եջմիածին 1897, եջ 194։

[2] Տես «Հայաստանը Բյուզանդիայի և Իսլամի միջև» (ֆրանսերեն), Փարիզ 1919, եջ 260 և այլն։

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0392677

ԳԻՆԸ 2 ՌՈՒԲԼԻ 50 ԿՈՊԵԿ (2ռ.-)

249
1005

Академ. Я. А. МАНАНДЯН.

НАРОДНЫЕ ВОССТАНИЯ В АРМЕНИИ ПРОТИВ АРАБСКОГО ВЛАДЫЧЕСТВА

ИЗДАТЕЛЬСТВО ЕРЕВАНСКОГО ГОСУНТА